ի՞նչ ձեւ էր ունեցել նրա հագուստը առաջ, այդ դժոար էր որոշել, որովհետեւ կեղտը, սկսեալ հին ժամանակներից, այնպիսի թանձր խաւ էր դրել նրա հագուստի վրայ, որ բոլոր գոյները ծածկոել եւ անհետացել էին նրա շերտերի տակ, իսկ յաճախակի կարկատանները տարիների ընթացքում աղաւաղել էին նրա հագուստի իսկական ձեւը: Հաջին մեզ համար աւելի հետաքրքիր դարձաւ այն ժամանակ, երբ իմացանք, որ այդ փնթի մարդը այն մեծ, քարաշէն պանդոկի տէրն է եւ քաղաքի հարուստ հայերից մէկը: Մեր սենեակը կարգի դնելուց յետոյ նա մօտեցաւ Ասլանին հարցրեց.

— Էնֆիայ ունե՞ս:

Ասլանը զարմացած նայեց նրա երեսին:

Յետոյ մեզ ասացին, որ նա սովորութիւն ունի իր պանդոկի բոլոր այցելուներին այդ հարցը առաջարկել: Երբ մէկի մօտ յայտնւում է էնֆիայ (քթափոշի) եւ նրան «թաւազայ է անումէ, նա նախ լի բնով լցնում է իր պնչածակերը, յետոյ սկսում է գովել նրա արժանաւորութիւնները այնքան, մինչեւ «թաւազայ անողը» ամաչելուց ստիպուած է լինում իր ունեցածի մի մասը, «բարեկամական յիշատակի համար», ընծայել նրան: Եւ այսպէս, հաջին միշտ ձրի էր ստանում այդ մեծ կարիքը, եթէ ոչ, իր ահագին քիթը գրգռելու համար բաւական ծախքերի կարօտ պիտի լինէր:

— Մենք մի բան չորոշեցինք ձեզ հետ, հաջի, — ասաց նրան Ասլանը, — որքա՞ն է սենեակի վարձը:

— Օրական քսան ղուրուշ, իսկ ձիաների համար՝ իւրաքանչիւրին մի-մի ղուրուշ, — պատասխանեց նա, աւելացնելով, որ մեր «խաթրիէ ամար է այդքան փոքր վերառնում, որովհետեւ «պատոականէ մարդիկ ենք եւ այլն:

— Շատ չէ՞:

— Դուք, պարոն, պէտք է գիտենաք, որ «մենք» սուտ խօսելու սովորութիւն չունենք, — ասաց նա մի անբացատրելի ժպիտ ձեւացնելով դէմքի վրայ:

Այդ կողմերում այդքան վարձ պահանջել կացարանի համար, աներեւակայելի բան էր, այնոամենայնիւ, Ասլանը ընդունեց, ասելով.

— Լաւ, գնայ:

Նրա հեռանալուց յետոյ Ջալլադը նկատեց.

— Այդ մարդը անպատճառ հայ-բողոքական պէտք է լինի: Պատրաստ եմ գրաւ բռնել:

— Ինչի՞ց գիտես, — ծիծաղելով հարցրեց Ասլանը: